ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

, ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/21 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝

-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.

-օրը՝ 22.01.2021թ,- ժամը՝ 15:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան

Հանձնաժողովի անդամներ Ա. Ղալումյան, Կ. Հարությունյան, Ռ. Աբրահամյան, Կ. Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Բ. Արամյան

Ընդունել ի գիտություն, որ ,,ՎԵՐՍԱՄ,, ՍՊԸ -ի կողմից 21.01.2021 թվականին ,,ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/21,, ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացվել է պարզաբանման հարցում.

Հարցադրում՝

Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ, իսկ շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման դեպքում՝ պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ

Խնդրում եմ պարզաբանեք Բանկային երաշխիքի տեսքով որակավորման ապահովումը ինչ ժամկետով պետք է ներկայացվի՝ Շինարարության ավարտից + 90 աշխ. օր թե Շինարարության ավարտ + երաշխիքային 1 տարի ժամկետ + 90 աշխ. օր

Ինչ է նշանակում պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարում, տեխնիկական հսկողության դեպքում:

Գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանում

Պարզաբանում

Համաձայն ,Գնումների գործընթացի կազմակերպմանե կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի՝ շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում որակավորման ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է ,Գնումների մասինե օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, այն է՝

,4. Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի կամ կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո՝ ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:ե

Հարկ է նկատի ունենալ, որ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումն իրենից ենթադրում է դրանով ստանձնած բոլոր պարտավորությունների՝ ողջ ծավալով կատարում:

Միաժամանակ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 20.10.2020թ. հ297-Ա հրամանի՝ փոփոխություններ են կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 02.06.2020թ. հ154-Ա հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերում: Հրամանն ուժի մեջ է մտնում 2020թ. նոյեմբերի 1-ից:

Կատարված փոփոխությունները վերաբերում են բանկային երաշխիքների օրինակելի ձևերին: Մասնավորապես՝ նախատեսվել է, որ բանկային երաշխիքի ձևով ներկայացվող՝

-որակավորման ապահովումը պետք է գործի կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դրանով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ.

-կանխավճարի ապահովումը պետք է գործի կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դրանով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ.

-պայմանագրի ապահովումը պետք է գործի կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դրանով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ: Եթե պայմանագրով սահմանվում է նաև երաշխիքային ժամկետ, ապա պայմանագրի ապահովումը պետք է գործի պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դրանով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ.

-որակավորման ապահովումը՝ շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում, պետք է գործի կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դրանով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Ա. Ղալումյան
		Կ. Հարությունյան
		Ռ. Աբրահամյան
		Կ. Անտոնյան
Քարտուղար՝		Բ. Արամյան